



Քրիստիան Հերքեր՝ Միացեալ Նահանգներու Արտաքին Գործոց Նախարարը և Գերա. Արքեպիսկոպոս Եսեկ Բաբի՝ ձախէն Յակոբ Աղամեան. Ալէք. Հայկ Թեվէֆէյեան և Յովհաննէս Տէր Յովհաննէսեան (Սեպտեմբեր 1957)

Նա Թեհրան կը հասնէր 21 Դեկտեմբերին խանդավառ ցոյցերուն մէջ բարեկամներու եւ բազմաթիւ ազգայիններու:

1959ի մուտքին Թեհրանի մէջ հանդիսացաւ Կորհնէր եւ կը զետեղէր հիմնաքարը ապագայ Միւթարեան վարժարանի՝ Չիլոյեան բարերար ընտանիքին նուիրած հողին վրայ, ի ներկայութեան Քահանայապետական նուիրակ Գերա. Լ. Ծանինի, իտալական հիւպատոսին, Արհի. Մկրտիչ Եպս. Արքեպիսկոպոսին, Մանուէլ Վ. Փոլատեանի, Յակոբ Վրդ. Ղարիպեանի եւ Ուխտիս միաբան Հ. Սամուէլ Վրդ. Արամեանի եւ Հ. Աթանաս Վրդ. Քէսէճեանի, Թեհրանի ազգային միութիւններու եւ բազմաթիւ ժողովրդեան:

Միւթարեան Միաբանութիւնն իր խոստումն ըրած էր, եւ հիմնաքարը դրուած: Կը մնայ որ աղնիւ բարերարներ չէնք բարձրացնեն եւ Միւթարեան վարժարանը կատարէ իր մշակութային եւ բարոյական դերը ի նպաստ Իրանի հայութեան:

Զանց կ'ընենք յիշել բոլոր պատուասիրութիւնները շուրջուած Գերա. Արքեպիսկոպոսին լրումն եղաւ «Միւթարեան Միաբանութեան օր» ակադեմիական մեծ հանդէսը, որ տեղի ունեցաւ նոյն ինքն Արքեպիսկոպոսին նախագահութեամբ 1959ի Յունուար 16ին, ճանչցնելու համար Իրանահայութեան՝ Միաբանութեան պանծալի անցեալը հայ մշակոյթին հանդէպ ունեցած անդնահատելի ծառայութիւններով:

ԳԵՐԱ. ՄՐԱՊԻՈՆ Վ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆԻ

ՔՍԱՆ ԵՒ ՀԻՆ ԳԱՄԵԱՅ ԱՐԲԱՅՈՒԹԵԱՆ
ՅՈՒՆԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՆԵՐԸ

ԵՒ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տարւոյ Օգոստոս 12ին Գերա. Մրապիոն Վ. կը բոլորէր իր Արքեպիսկոպոսական ծառայութեան:

Քառորդ դարու իր իմաստուն եւ անձնուէր վարչութիւնը, իր հայրական սէրն եւ զոհողութիւնները եւ ձեռք բերած բազմազգի յաջողութիւնները նուիրական պարտականութիւն կը դնէին Միաբանութեան վրայ խանդավառութեամբ տօնելու այս յորեկանը՝ որպէս ցոյց որդիական սիրոյ եւ մեծարանքի:

Աւելորդ է շեշտել հոս դժուարութիւնները իր բարձր պաշտօնին՝ որուն հոգեւին կը լծուէր 1935 տարւոյ Օգոստոս 12ին, երբ ժողովական հայրերը միաձայն հաւանութեամբ զինքը կ'ընտրէին առաջնորդ Միւթարեան Միաբանութեան:

Իր խորին հաւատքը, իր արի հոգին եւ բարեխառն նկարագիրը մեծագոյն գրաւականներն եղան իր յաջող գործունէութեան՝ շարունակելով իրաւորել վանական շիմադրին սուրբ կտակը՝ վանական կեանքի սրբութեան, զբաղման, առաքելական եւ կրթական ասպարէզներուն մէջ:

Նախորդ էջերուն մէջ արդէն երկար խօսուած է յորեկան Արքեպիսկոպոսին ծառայութեան եւ ունեցած յաջողութիւններուն վրայ՝ որոնք կը հրճուէին Միաբանութիւնն եւ ազգը միանգամայն, եւ ամէնուն սրտէն կը բարձրանայ դէպի երկինք զոհութեան եւ օրհնութեան երգը՝ «Երաւոյն»:

Օգոստոս 13ն է: Ս. Ղաղար տենդադին պատրաստութեան մէջ է յորեկանին որ պիտի կատարուի վաղը՝ Տիրամօր հրաշափառ վերափոխման տօնին օրը:

Եւ ահա միջօրէին մօտ վանք կը հասնի վանեւորիկ Ամեն. Ծիր. Պատրիարք Յովհաննէս Ուրպանի, եւ հաւաքելով վանական հասարակութիւնը ամենամեծ զոհականութեամբ կ'աւետէ թէ Ս. Քահանանապետ Արքեպիսկոպոս անուանած է յապետը Արքեպիսկոպոս:

Ո՞վ կրնայ երեւակայել անակնկալ աւետիսին առթած անհուն հրճուանքը որ կ'ողողէ բոլոր սրտերը, մինչ զանդակներու ուրախ զօղանքը ալիք ալիք կը սուրայ մինչեւ հեռաւոր աշխարհներ հաղորդակից ընելու Միաբանութեան ուրախութեան բոլոր բարեկամ սրտերը:

Պատրիարքը առաջինը կ'ըլլար որ իր սրտեանդն մաղթանքները կ'ընէր Գերա. Արքեպիսկոպոսին, եւ սա իր կարգին յուզուած շեշտով խորին շնորհակալութիւն կը յայտնէր Ծիրանաւոր պատգամաւորին, իրենց Ծիրանաւոր պատգամաւորին, իրենց Ծիրանաւոր թարգմանն ըլլար Ս. Քահանայապետին մօտ իր ամենախորին երախտագրութեան՝ այս բարձր շնորհին հատկութեան՝ այս բարձր շնորհին համար զոր ըրած էր ի նշան իր յատուկ սիրոյն եւ զնահատութեան հանդէպ Միաբանութեան եւ իր անձին:

Յաջորդ առաւօտ Յորեկանը կը բացուէր հանդիսաւոր ճանաւորով, զոր կը մատուցանէր Գերա. Արքեպիսկոպոսը հոգեկան

մեծ յուզումով: Երգեցողութիւնը, ըստ պատկերացումների ոսկի ցոլացումներով շրջանակով օրուան հանդիսաւորութիւնը կը քարոզէին: Օտարները խակապէս համայնութեան հետ հարգելի քաղցր ու բարեպաշտիկ տպաւորութեամբ:

Կէսօրին ուրախութեան խնձոյքն էր: Վանական հասարակութեան զատ սեղանակից էին Վենետիկի եկեղեցական, քաղաքական եւ զինուորական իշխանութեանց բարձր ներկայացուցիչները:

Բացի օտար բարեկամներէ կային Մխիթարեան եւ Մուրատ-Ռափայէլեան Նախկին Սաներ, վանքի եւ մուրատ-Ռափայէլեան վարժարանի աշակերտութիւնը:

Հասած էր ժամը խնդակցութեանց:

Յանուն Միաբանութեան կը խօսէր Հ. Մեսրոպ Վ. Ճանաչեան երախտագիտական ջերմ արտայայտութիւններով՝ թըւելով Գերպ. Աբրահամ Գործունէութեան դրուագները եւ յաջողութիւնները, ու խօսքը կ'աւարտէր սրտագին մաղթանքներով:

Օտարներէն խօսք կ'առնէր Գերպ. Յովսէփ Սքարփա՝ մտերիմ բարեկամ Միաբանութեան եւ Մ. Ռափայէլեան վարժարանի աշակերտութեան՝ որոնց երկար տարիներու ընթացքին սիրուած ուսուցիչն էր: Յետագարձ ակնարկով կը յիշէր օրերը երբ Գերպ. Աբրահամը դեռ երիտասարդ Ուսումնապետ վարժարանին՝ այնքան նուիրումով լծուած էր կըրթական գործին եւ թէ այնքան սիրալիր յարաբերութեամբ եւ գործակցութեամբ յառաջ կը վարէին հայ նոր սերունդին դաստիարակութիւնը Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանին մէջ որ այնքան զնահատուած է ոչ միայն հայերէն այլ նաեւ իտալական շրջանակներէն:

Յետոյ խօսք կ'առնէր Փրոֆ. Կոֆրետոյ Ճիւրտա, եւ Նախկին Սաներէն՝ Բժ. Մանուկ Խանպէկեան եւ յանուն բոլոր Մուրատ-Ռափայէլեան սաներուն՝ Փրոֆ. Իդնատիոս Քիւլիկեան:

Սեղանակիցներուն կը բաժնուէին նորատիպ մատեններ՝ լոյս տեսած օրուան յիշատակով եւ սրբազան պատկերներ:

Հ. Ներսէս Վ. Տէր Ներսէսեան կը կարգար գրաբար գեղեցիկ տաղ մը՝ Աբրահամ Գործունէան ծանօթ հայ նկարչին կողմէ գեղադարձուած մանրանկար մագաղթի մը վրայ՝ Սկեռայի չքնաղ Աւետարանին խորաններէն ձեւած:

Հասարակաց խանդավառութիւնը կ'աւելնար մասնակցութեամբ հեռաւորներու որոնց հեռագրական բազմաթիւ մաղթողականները, ինչպէս բաժակաճառերը ծափահարութիւններով կը պսակուէին:

Յաւարտ՝ Գերպ. Աբրահամը յուզուած եւ հայրական շեշտով շնորհակալութիւն կը յայտնէր Միաբանութեան Հայրերուն եւ բոլոր բարեկամներուն ջերմ արտայայտութիւններուն համար:

Ձանց կ'ընենք յիշելու հանդիսաւոր այս տօնին մէջ մասնակցութիւնը վանքի աշակերտներուն՝ որոնք իրենց սիրախառն մաղթանքները կը հաղորդէին ներքին մը տերիմ շրջանակի մէջ Գերպ. Աբրահամ, որ յատուկ հայրական սիրով կը հետեւէ անոնց եւ իր խնամքն ու քաջալերը անպակաս կ'ընէ, քանի որ անոնց մէջն է Մխիթարի հաստատութեան ապագան:

Յորեկնական օրուան իրիկունը վանքի տաճարին մէջ կը մատուցուէին գոհարանական աղօթքներ խնդրելով միանգամայն որ Աստուած յորեկար Աբրահամ շնորհէ երկայն եւ արդիւնալից օրեր ի պայծառութիւն Միաբանութեան:

Բայց յորեկանի հանդիսաւոր վերջաբանը եպիսկոպոսական ձեռնադրութիւնն էր որ տեղի կ'ունենար Հոկտեմբերի 30ին:

Հոկտեմբեր 29ին վանք կը հասնէր Գերբերշնիկ Հոգեւոր Տէր Ծիր. Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան Կաթողիկոս Պատրիարք՝ որպէս ձեռնադրիչ, իրեն օգնական ձեռնադրիչներ ունենալով յանձին Գերպ. Գրիգոր Արքեպս. Հինտիէի եւ Գերպ. Կիւրեղ Եպս. Զոհրապեանի: Մ. Նոնց կ'ընկերակցէին Գերպ. Յակոբ Թ. Մ. Վ. Կիրակոսեան եւ Ներսէս Վ. Սեթեան:


Համեմատ եպիսկոպոսական ձեռնադրութեան կանոնին՝ Ս. Ղազարու տաճարին մէջ կատարուեցաւ նախապատրաստ



Պաշտօնական քափօր Պատրիարքարանէն դէպի Ս. Մարկոս, անցնելով Ս. Մարկոսի հրապարակէն

տական մասը: Եւ ահա 30 Հոկտեմբերի Կիրակի առաւօտը կարծես բոլորովին թափուր է Ս. Ղազար: Ամբողջ Միաբանութեան Հայրերն եւ աշակերտութիւնը Վենետիկ փոխադրուած են ու յետ ամենաշքեղ զգեստաւորութիւն հանդիսաւոր պալատին մէջ իննդասեան հանդիսաւոր թափօրը կ'իջնէ դէպի Ս. Մարկոսի հրապարակը՝ կը յառաջեն սաղմոսասացները՝ կը հեծեռքերնին պաշտամանը գրեթէ կը հետեւին գոնապաշտները՝ ձեռքերնին սուրբ

լոյսը, եկեղեցւոյ բանալիները եւ ժամահարները՝ ապա անադանոսները (ընթերցողը) կը ելլով Մարգարէական գրեթէ, շուրջը եւ այլ եպիսկոպոսներուն Հայրապետին հորրորդ դասը երգման գաւազանները՝ չորրորդ դասը երգման գաւազաններն են՝ ձեռքերնին ունենալով ցուցիչներն եւ ձեռքերնին ձեռքը եւ ձողարարձ մկրտութեան երգման ձեռքը եւ ձողարարձ խաչը: Ասոնց հետեւին ջահնկալիները՝ տանելով մոմակալները, վառուած մոմերը, ճրագով աշտանակները եւ գինիի կուրբ, ջրալից ամանները, բուսման թերթ, ջրալից ամանները, բուսման



Հարցուփորձ, դաւանութիւն եւ ընթերցում Քահանայապետական կոնգրակին՝ Գերլ. Յովսէփ Մխարիայի կողմէն

ները ընտրեալին եւ անկէ խոստում կ'առնէ սրբութեամբ պահելու իր աստիճանը, յանձնարարելով պահել Աստուծոյ պատուիրանները եւ Ս. Եկեղեցւոյ կանոնները եւ դատել իր ժողովուրդը անթիւր եւ անկաշառ ուղղութեամբ, այցելելով որբերուն եւ այրիներուն եւ բոլոր աղքատ ու տառապեալ ժողովրդեան՝ օգնելով եւ ոգորմելով անոնց իր կրօնական համեմատ։

Եւ այնուհետեւ կը հարցնէ թէ կը հա-

ւատա՞յ Քրիստոսի մարդկայնութեան խորհուրդին իր բոլոր մանրամասնութիւններով, յետոյ Ս. Հոգւոյն եւ Կաթողիկէ եւ Առաքելական Եկեղեցւոյն, եւ թէ կ'ընդունի՞ Ս. Գրքի կանոնական գրքերը։

Եւ ապա կու գայ երկար շարքը նշուածներուն։

«Նշուած զամենայն հերետիկոսս եւ զհերձուածողս որք ընդդէմ յարեան Ս. Եկեղեցւոյ»։



Ընծայեալի երաժարման պահը՝ մինչ սարկաւագները կ'երգեն «Աստուածային եւ երկնաւոր շնորհ»

Եւ մինչ նուիրեալը կը պատասխանէ. Նշուած եւ. անգին սարկաւագներն ու դպիրները կը դռնէն յունարէն բառով. Անաթեմա։

Հուսկ Հայրապետը կը հրամայէ.

«Արդ, ասա՛ դու ինքնին բերանով քով զխոստովանութիւն կաթողիկէ հաւատոց քոց զի ամենեքեան լուիցեն»։

Այստեղ նուիրեալը համեմատ Հայրա-

պետին հրամանին կու տայ հանդիսապէս իր հաւատքին դաւանութիւնը։

Երբ կ'աւարտի այս կարեւոր մասը, աւագներէցը կը ձայնէ. Հրամայեա՛լ, ընտրեալդ, ի վեր մատիր։

Այստեղ Հայրապետը խաչ կը հանէ նըւիրեալին վրայ եւ կ'ըսէ հետեւեալ պաշտօնական խօսքերը. «Զօրութիւն ամենասուրբ Հոգւոյն ի ձեռն իմոյ Հովաարու-



Ձեռնադրութեան պահը

թեանս, այսուհետեւ դրողմէ զքեզ ընդունել զկարգ քահանայապետութեան, յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ»։ Եւ յետոյ կը կարէ իփողոնաթիոնը (կոնքեռ) դօտիէն նուիրեալին որ վար կ'իջնէ եւ իր ետեւէն Հայրապետը, մինչ զպրաց դասը ժողովրդեան կողմէն շարունակ կ'երգէ։ Իս փոլլա՛ չ'թի, Տեսփոթա։

Եւ յետ աղօթելու լռելեայն, կը սկսին պատարազը պաշտօնապէս. Օրհնեալ թա-

ղաւորութիւն Հօր եւն. եւ կը յառաջէ մինչեւ «Տէր Աստուած մեր զրազկատարած զաղաչանս», այսինքն մինչեւ Աւետարան եւ կանգ կ'առնէ։

Երկու եպիսկոպոսները կ'երթան ընտրեալը բերելու Հայրապետին, որ զինքը իր ծունկերուն մօտ կ'առնէ եւ թիկունքը կը դնէ Աւետարանը. եւ հրաման կ'ընէ ընտրութեան կոնդակը կարգաւոր։ Կը մօտենայ հանդիսաւոր պահը։ Ըն-



Օծումը ձեռնադրեալին

տրեալը զէպի ժողովուրդը զարձած է հրաժարականի ձեւով, մինչ Սարկաւագները կ'երգեն «Աստուածային եւ երկնաւոր շնորհ», Դպրաց դասը ժողովրդեան կողմէն կը դռէ։ Սրժանի է։

Հայրապետը եւ իր հետ առընթերակայ եպիսկոպոսները ձեռքերին ընտրեալին զլիսուն դրած խորհուրդին իսկական մասը կը կատարեն հետեւեալ բանաձեւով. «Աստուածային եւ երկնաւոր շնորհ, որ միշտ

լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ, կռչէ (զայս առաքելականութենէն յեպիսկոպոսուն) ի քահանայութեան անձին իւրոյ սուրբին, ըստ վկայութեան անձին իւրոյ եւ ժողովրդեանս։ Ես դնեմ զձեռս ի վերայ դորա, եւ զուք աղօթաւ արարէք առ մենեքեան զի արժանաւոր լիցի սա զաստիճան եպիսկոպոսութեան անարատ պահել առաջի սրբոյ սեղանոյ Աստուծոյ»։

Այնուհետեւ երկար աղօթքներ կ'ընէ եւ



ՏՈՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍԿՆՈՒԹՅԱՆ ԳԱՆՈՒԹՅԱՆ

կը սկսի օծման արարողութիւնը սուրբ միւսոնով. նախ կ'օծէ գլուխը խաչանման եւ ձեռքերը. յետոյ կու տայ դաւազանը, խաչն ու մատանին եւ Ս. Աւետարանը. կը դնէ խոյրը (միթր) անոր գլուխը, կու տայ Եմիփօրոնը՝ որպէս նշան քահանայութեան լրման եւ զինքը կը համբուրէ եւ իրմէ վերջ բոլոր կղերիկոսները, եպիսկոպոսները եւ քահանաները:

Ձեռնագրութեան եւ օժման արարողու-

Թիւնն աւարտած է . կը կարգան Աւետարանը եւ պատարարդը կը յառաջէ մինչեւ իր աւարտը :

Իր աւարտը :
Աւետարանէն վերջ Վենետիկի Ամեն-
Պատրիարքը Յովհաննէս Ուրպանի խան-
դավառ շէշտով եւ օծուն խօսքերով ամ-
պիրներն վրայէն կը յայտնէր իր կղերին
եւ ժողովրդեան ջերմ խնդակցութիւնը,
հիւսելով միանգամայն դովքը ընտրեա-
լին, Սխիթարեան Միաբանութեան և Հայ



Ձեռնադրողին եւ ձեռնադրեալին ողջագործումն եւ համբոյրը յաւարտ արարողութեան

աղբերն որ կը փայլէր իր առինքնող ծէսով :
Իսկապէս իրենք իրենցմէ դուրս ելած էին
մեր հայ եղբայրները որ բեմին դիմաց եւ
երկու կողմերը խոնուած էին քաղաքա-
կան բարձր իշխանութեանց քով, այդ
ջերմ խօսքերէն, այդ զմայլելի արարո-
ղութիւններէն, ուր սպասներու ոսկեղէն
փայլը տաճարին ոսկեփայլ կամարներուն
հետ կը խառնուէր, եւ արեւելեան մեղմ-
օրօր եւ բարեպաշտիկ եղանակները խոն-
կով եւ աղօթքով օծուած կարծես կ'ա-

Լեկոծէին կամարներէ կամար եւ կը յու-
ղէին հայ սրտերը։
Սարկաւազները իրենց մեղմ երգերով ե-
անդին դպրաց դասը հոգեխցած Հ. Ներ-
սէս Վ. Տէր Ներսէսեանի համակ խանդ
դարձած վարչութեան տակ՝ սքանչելի
երգեցողութիւն մը տուին։
Հայ ժողովրդեան բազմութիւնը Միւս-
նի դաղութէն էր, բայց եւ անգին կային
Հոռոմէն, Փարիզէն, Մարսիլիայէն, Իտա-
լիոյ զանազան քաղաքներէն, Արեւելքէն



Խմբոյի ժամում՝ Հոգեւոր Տիրոջ խօսքը առ մեր ազգայինները
Նստած՝ Գերպ. Ուլուխոնեան, եւ իր ետեւը շրտ. Օննիկ Մանուկեան եւ իր ընտանիքը
(Մ. Ռ. վարժարան, 30 Հոկտ. 1960)

նախկին Սաներու համար որ հոն զերար կը
զտնէին ուրախ ժամուն եւ միանգամայն
պսակ կը կազմէին Գերպ. Արքաճօր, այդ
բացառիկ օրուան մէջ՝ յազեցնելով իրենց
սիրոյ կարօտը եւ ուրախութիւնը անոր
ամբարձումին մէջ Արքեպիսկոպոսական
աստիճանին:

Դժուարին է հոս արձանագրել այն գե-
ղեցիկ խօսքերը որ ճաշին վրայ ալ ար-

տայայտեց վենետիոյ Ամեն Պատրիարքը,
յետոյ Հոգեւոր Տէրը, եւ ժողովրդեան
խաւերէն մեր նախկին աշակերտներէն
Ստեփան եւ ԲԺ. Արամայիս Սրապեան եղ-
բայրները եւ Տոբթ. Մանուկ Խանաթեան:
Կարգացուեցան ուրախակցութեանց հե-
ռագիրներու եւ նամակներու մաս մը որ
աշխարհիս չորս կողմերէն կը հասնէին:
Շատեր այդ առթիւ իրենց նուիրատուու-



Պրն. Ստեփան Սրապեանի բարեմաղրութիւնը եւ սկիի նուիրումը
(Մուրաւ-Ռաֆայէլեան վարժարան, 30 Հոկտ. 1960)

Թիւններն ըրած էին Միւրթար Արքաճօր
յուշարձանին շինութեան:

Ներկաներն ալ Թանկագին նուէրներ
ըրին Արքաճօր, ինչպէս Ստեփան Սրա-
պեան, Երուանդ Հիւսիսեան, Գեորգ Խան-
կէլտեան, Տիկ. Նուարդ Տելաիզեան, Զա-
ւէն Մնտիկեան, Էրմաննոյ Մենափաշէ Լն:

Պաշտօնական ճաշէն վերջ երբ օտար
բարեկամներն հրաժեշտ առին շնորհակա-
լութեան եւ խնդակցութեան արտայայ-

տութիւններով, Հայ ժողովուրդը յետ
ջերմօրէն խնդակցելու Գերպ. Արքաճօր՝
չըջապատեց յարգանքով իր սիրելի Հոգե-
ւոր Տէրը, երկար խօսեցաւ անոր հետ
մտերմութեամբ, սիրով լսեց անոր հայ-
րական խօսքը պինդ եւ ամուր մնալու հայ
լեզուի եւ նուիրական աւանդութեանց եւ
ամէնուրեք օտարներուն առջեւ փայլեցնե-

լու Հայ ազգին պատիւն ու փառքը:

Պատմական օրուան վերջին դրուագն ալ



Ն. Ս. Յովհաննէս ԻԳ. Ս. Քահանայապետը իր աջին ունենալով Գերպ. Սրապիոն Արքեպս. Ուլուխոնեան Ընդհ. Արքահայր, եւ իր ձախին՝ Հ. Նղիա Վ. Փէշիկեան՝ Ընդհ. Քարտուղար Մխիթարեան Միաբանութեան (Վատիկան, 11 Նոյեմբեր 1960)

կ'աւարտէր, թողլով հոգիներուն մէջ այն քաղցր եւ մխիթարական տպաւորութիւնը զոր ներկաները զգացին:

Կնիք այս պրակին թող ըլլայ այն սիրտի ընդունելութիւնը զոր Ն. Ս. Յովհաննէս ԻԳ. Ս. Քահանայապետը վերապահած էր մեր Գերպ. Արքահայր:

Արդարեւ հայրական սիրոյ եւ գուրգուրանքի ամէն ցոյց ըրաւ Նորին Սրբութիւնը երբ Գերպ. Արքահայրը զնաց իրեն այցելութեան Նոյեմբեր 11ին Միաբանութեան Ընդհ. Քարտուղարին հետ:

Նա երկար տեղեկութիւններ հարցուց Միաբանութեան մասին եւ Ս. Ղազարու վանքին. յիշեց մի առ մի իրեն ծանօթ Հայրերը, յայտնեց իր խորին խնդակցութիւնը Արքահայր եւ համօրէն Մխիթարեան Միաբանութեան եղած բարձր պատիւին համար՝ զոր ինք իրեն սիրոյ եւ յարգանքի պարտականութիւն համարած էր կատարել առիթով Արքայական քսան-եւհինգամեայ յորելեանին:

Աւելցուց սիրոյ եւ քաջալերանքի խօսքեր՝ օրհնելով հուսկ զինքն ու Միաբանութեան բոլոր Հայրերը մի առ մի:

ՇՆՈՐՀԱՌՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ԵՒ ՆԱՍԱԿՆԵՐ

Հայ եկեղեցականներ

Castelgandolfo, 13 Agosto 1960

Prendo viva parte esultanza cotesta diletta Congregazione lieta occasione venticinquesimo abbaziale vostra eccellenza nobilitata alto riconoscimento dal Santo Padre conferente pienezza sacerdozio stop Prego il Signore di accordarLe lunghi felici anni intercedente Vergine santissima Assunta protettore prosperare ognora benemerito istituto vantaggio santa chiesa gerarchia et popolo armeno.

Cardinale Patriarca Agagianian

Catolicossat Arménien de Cilicie

Antélias, le 29 Oct. 1960

Sa Grandeur Archevê Srabion Oulouhadjian Félicitations cordiales occasion heureuse ordination Archevêque distinction méritée prions pour succès personnel prospérité Congrégation.

Catholicos Zareh I de Cilicie

Beyrouth, 27 Ott. 1960

Associandomi gioia Congregazione Mechitarista prego gradire vive felicitazioni fervidi voti occasione consacrazione episcopale.

Arcivescovo Batanian

Istanbul, 29 Ott. 1960

Arcivescovo e clero d'Istanbul auspicano ogni bene occasione consacrazione e giubileo.

Monsignore Kiregian

Wien, 13 Ago. 1960

Felicitazioni auguri cordiali per giubileo.

Wien, 15 Ago. 1960

Sincères félicitations occasion nomination archévêque, vœux ardents prospérité votre Congrégation.

Wien, 29 Ott. 1960

Prenant part aux solennités de votre sacre épiscopal prions d'agréer nos sincères félicitations.

Archevêque Habozian
Congrégation Méchitariste

Alep, 11 Set. 1960

Sincères congratulations vénérable Congrégation Méchitariste pour grand honneur mérité en votre digne personne ad multos annos.

Archevêque Layekian

Paris, 24 Ago. 1960

Alleluia remerciens Dieu félicitations prières pleins succès entreprises saintes.

Monseigneur Zohrabian, Père Adamian

Poggio Catino, 17 Ago. 1960

Occasione sua promozione arcivescovile alto attestato Santa Sede degna ricompensa meriti saggia direzione venticinque anni et confermata meritata stima Congregazione Mechitarista presento fervide felicitazioni voti partecipando particolarmente grande esultanza cara casa Mechitarista.

Ghiragosian Procuratore Patriarcale

Marseille, 26 Ago. 1960

Vives félicitations ad multos annos.

Amadouni

Paris, 11 Ago. 1960

Agréez vœux ardents essor apostolique œuvre vénérable Fondateur continuateurs.

Amadouni, Adamian

Grayville Penn. 29 Ott. 1960

Warmest congratulations and Gods richest blessings occasion episcopal consecration.

Mons. Stepanian